

ՏԻԿԻՆ ԲԱՐԱՆԱՆ-ԿԱՐՔՈՆԵՆ



Կրան-Փալէի մէջ կազմակերպուած արուեստագիտութիւններու ցուցահանդէսին որ այս օրերս բացուեցաւ, մասնակցած է նաեւ Տիկին Բարայեան-Կարբոնել, ամենատաղանդաւոր աշակերտուհին Էօմէն Գարիէր մեծանուն նկարչին եւ որ ամենանուրբ արուեստագէտներէն մին է որ մեր մէջ երեւցած ըլլան : Իր գործերը ցուցադրուած էին մասնաւոր բաժնի մը մէջ որ յատկացուած էր Գարիէրի երկու աղջիկներուն եւ մէկ քանի աշակերտութիւններուն արտադրութեանց, եւ այդ բաժնին ամենէն ուժեղ կտորներն էին՝ անտարակուսելի կերպով : մասնաւորապէս ուշագրաւ էին տարիքոտ կնոջ մը կենդանագիրը, արուեստագիտուհւոյն կենդանագիրը՝ իրմէ գծուած, հայ աղջիկ մը որ իր փոքրիկ եղբայրը պաշտպանողական զմայլելի շարժումով մը կը գրկէ, աղջիկ մը որ կը բանի, եւ քանի մը ինքնատափ բնանկարներ : Անանիոսի յօշորդ թիւերէն մէկուն մէջ մասնաւոր յօշուածով մը պիտի խօսինք Տիկին Բարայեան-Կարբոնելի ամբողջ գործին վրայ :

Թ Ի Ր Ա Կ

Պ. Պ. Վահան Թէքէեանի եւ Միքայէլ Կիրճեանի տնօրէնութեամբ սկսած է հրատարակուիլ Աղեքսանդրիոյ մէջ գրական ամսաթերթ մը, Շիրակ : Առաջին թիւը (Յունուար) կը պարունակէ Էլլը Երուանդ Օտեանի, Էօմանայի, Ս. Եարճանեանի, Ա. Արփիարեանի, Շարաւանի, Ս. Տիրանեանի, Ինտրայի, Միքայէլ Կիրճեանի : Պ. Թէքէեան ծանօթ է իր փառուկ ու թարմ բանաստեղծութեանց նուրբ հրապարտումը : Պ. Կիրճեան մեր գրականութեան նորագոյն ղեկավարներէն մէկ ամենէն ինքնատիւներէն ու բազմալարներէն մին է, նորեկ մը որ վարպետ մըն է արդէն : Այդ երկու նորատաղանդ գրագէտներուն առաջնորդութեամբ հրատարակուած թերթ մը կոչուած է իրական ծառայութիւններ մատուցանելու մեր գրականութեան :

Տարեկան բաժնեգինն է 15 ֆրանք :
Հասցէ՝ Rédaction de la Revue CHIRAG
(Egypte) Alexandrie

LES ARTS DE LA VIE



1904ի Յունուարէն ի վեր կը հրատարակուի Փարիզի մէջ գեղարուեստական ամսագիր մը, Les Arts de la Vie (կեանքի արուեստները) տիտղոսով. խմբագրապետն է Պ. Կապրիէլ Մուրէ, հանրածանօթ գեղարուեստական քննադատը, որ Հայոցս մասնաւորապէս սիրելի է այն գեղեցիկ ուսումնասիրութեամբ զոր նուիրեց Հայկական արուեստին ու բանաստեղծութեան. կը հրատարակէ խնամեալ ուսումնասիրութիւններ ժամանակակից արուեստի ամենաշահեկան երեւոյթներուն վրայ, ջատագովելով « կեանքի վրայ հիմնուած արուեստ »-ին, այսինքն ճշմարիտ արուեստին ուղղութիւնը : Թերթը տպագրուած է ամենաուրբ ճաշակով : Այս տարուան Յունուարի թիւը կը պարունակէ Ս. Չօպանեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութիւնը՝ Նահապետ Քուշակի բանաստեղծութեան մասին :

Տարեկան բաժնեգինն՝ 13 ֆր. 50 ֆրանսոս), 15 ֆր. (օտար երկիրներ) . — Հասցէ՝ 6, Rue de la Chaussée d'Antin, Paris.

ՆՈՒՐԱՍՏՈՒՈՒԹԻՒՆ



Պ. Տիգրան խան Քէլիեան « Chants populaires arméniens » զբոնէ երեսու օրինակ գնելով որոշած է իր նուրբ զրկել Եւրոպայի անձնաւորութեանց և հայ ընծերգարաններու և զգրողներու : Կը խնդրենք մեր գործակալներէն որ հասին մեզի տայ հասցենք ընծերգարաններու և զգրողներու, որպէս զի անոնց զրկուին այդ զբոնէ օրինակներ :

Պ. Ա. Մէլլը-Ազարեանց նուիրած է տարուան մը « Անանիա » Տոսկի հայ ուսանողութեան : Պ. Տիգրան Յարութեան Ծատուրեան նուիրած է տարուան մը « Անանիա » Տուլալիւու Հայոց գրագրանին : Պ. Արամ Պետրոսեան Մեղրաբեան նուիրած է տարուան մը « Անանիա » նմանապէս Տուլալիւու զրգարան-ընծերգարանին :

Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAHADJIAN
18, Rue des Gobelins, Paris.